ՀՈՒՅՍԻ ԿԱՄՈՒՐՋ

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2025

Նախագահի խոսք

2025 թվականը «Հույսի կամուրջ» ՀԿ-ի համար դարձավ շարունակականության, դիմակայունության և զարգացման տարի: Չնայած սոցիալական և ֆինանսական բազմաթիվ մարտահրավերներին՝ մենք շարունակեցինք մեր գործունեությունը՝ ապահովելով հաշմանդամություն ունեցող երեխաների և երիտասարդների կրթության, վերականգնման, սոցիալական ներառման և իրավունքների պաշտպանության ծառայությունների շարունակականությունը Տավուշի մարզում և Հայաստանի տարբեր համայնքներում:
Տարվա ընթացքում մեր ծրագրերի անմիջական շահառու դարձան հարյուրավոր երեխաներ, երիտասարդներ, ծնողներ, մանկավարժներ և համայնքային ներկայացուցիչներ: Մենք շարունակեցինք զարգացնել ներառական կրթությունը, վերականգնողական ծառայությունները, ներառական սպորտը, երիտասարդների մասնակցությունը և համայնքային ներառման նախաձեռնությունները:
2025 թվականին հարյուրավոր երեխաներ ստացան մանկավարժահոգեբանական և վերականգնողական ծառայություններ, տասնյակ դպրոցներ և կրթական հաստատություններ ստացան մասնագիտական աջակցություն, երեխաները ներգրավվեցին ներառական սպորտային, մշակութային և սոցիալական միջոցառումներում, ծնողները և մանկավարժները մասնակցեցին վերապատրաստումների և խորհրդատվությունների, համայնքներում շարունակվեց ներառականության և հավասար իրավունքների վերաբերյալ իրազեկման աշխատանքը:
Այս ամենը հնարավոր դարձավ մեր գործընկերների, դոնորների, համայնքների, կամավորների և հատկապես մեր երեխաների ու ընտանիքների վստահության շնորհիվ:
Մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը, Mission East-ին, UEFA Foundation for Children-ին, IDBank-ին և Idram-ին, Buy Armenian Foundation-ին, «ՍՄՀ Սոլուշնս»-ին GlobalGiving-ին, Hye Times-ին, ինչպես նաև բոլոր կազմակերպություններին ու անհատներին, ովքեր 2025 թվականին կանգնած էին «Հույսի կամուրջի» կողքին:
Երախտագիտությամբ

Սուսաննա Թադրոսյան

ԵՐԱԶԱՆՔ, ՈՐ ԴԱՐՁԱՎ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Յոթամյա Մանեն աշխույժ, ժպտերես և հետաքրքրասեր աղջիկ է: Նա երբեք չի բաց թողնում ֆուտբոլային խաղերը և միշտ երազում է մի օր տեսնել իր կուռքին՝ Քրիստիանու Ռոնալդոյին:
Սեպտեմբերյան այդ օրը նրա երազանքը դարձավ իրականություն: Տաթևիկը ընտրվեց այն փոքրիկներից մեկը, ովքեր Հայաստան–Պորտուգալիա խաղի մեկնարկին պետք է ուղեկցեին ֆուտբոլիստներին դաշտ: Երբ լսեց, որ հենց ինքը պիտի բռնի Ռոնալդոյի ձեռքը, նա շփոթվեց ու միևնույն ժամանակ փայլեց՝ «Ճի՞շտ եք ասում, ես՞»:
Եվ այդ վայրկյանը եկավ: Ռոնալդոն ժպտաց նրան ու մեկնեց իր ձեռքը: Մանեն զգաց, թե ինչպես է իր փոքրիկ ձեռքը հպվում աշխարհի ամենահայտնի ֆուտբոլիստի ձեռքին: Մարզադաշտի աղմուկը, լուսարձակների լույսերը, հազարավոր մարդկանց ծափերը կարծես անհետացան: Մնաց միայն նա ու այն աննկարագրելի զգացումը, որ երբեմն երազանքները իսկապես կատարվում են:
Այդ մի պահը դարձավ Մանեի կյանքի ամենափայլուն պատմություններից մեկը՝ ուրախության, ինքնավստահության և հավատքի վայրկյան: Նա վերադարձավ տուն ժպիտով ու նոր երազանքներով՝ համոզված, որ կյանքը երբեմն իսկապես կարող է հեքիաթ լինել:

Սուսաննա Թադրոսյան

«ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՈՒՄ ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ»

Կրթության,գիտության,մշակույթի և սպորտի նախարարություն

2025 թվականին «Հույսի կամուրջ» ՀԿ-ն շարունակեց իրականացնել մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ Տավուշի մարզում՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աջակցությամբ:

Ծրագրի հիմնական արդյունքները

- 211 երեխայի կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատում,
- Մանկավարժահոգեբանական ծառայություններ է ստացել՝ 602 երեխա,
- Ծառայություններից օգտվող երեխաների շուրջ 81%-ի մոտ արձանագրվել է չափելի առաջընթաց առաջադրանքների կատարման, վարքագծի, ուշադրության կենտրոնացման, հաղորդակցման, ինքնուրույնության զարգացման ոլորտներում:
- Աջակցություն է տրամադրվել 500 անհատական ուսուցման պլանների և 102 անհատական ուսուցման և զարգացման պլանների մշակմանը, իրականացմանն ու գնահատմանը:
- 454 երեխայի խելամիտ հարմարեցումների տրամադրման հարցում մատուցվել են խորհրդատվություններ:
- Իրականացվել է 288 վերապատրաստում 140 ուսումնական հաստատություններում,
- որոնց մասնակցել է ընդհանուր 4107 մանկավարժական աշխատող:
- 446 խորհրդատվություններ են կազմակերպվել մարզի 140 ուսումնական հաստատություններում, որոնց մասնակցել են 2836 մանկավարժներ և ծնողներ:
- Կազմակերպվել են՝
- «Ապրել միասին, սովորել միասին» ներառական թատերախմբերի փառատոն 20 դպրոցների 300 երեխաների մասնակցությամբ,
- «Գրքի տոն»՝ 12 դպրոցներում, 432 երեխաների մասնակցությամբ,
- «Բարության միջազգային օր» միջոցառումներ՝ 40 դպրոցներում, 1158 սովորողների մասնակցությամբ,
- «Բարության դասեր»՝ 18 դպրոցներում, 623 սովորողների մասնակցությամբ:

«CHILD» ԵՐԵԽԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՒ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԱՌՄԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Երբ կամրջվում են հույսը, ներառումը, սովորելն ու զարգացումը

Ծրագրի շրջանակում երեխաներին տրամադրվել են անհատական և խմբային վերականգնողական ծառայություններ՝ ներառյալ ֆիզիկական, խոսքի, էրգո, արթ և խաղային թերապիաներ: Ծառայությունները նպաստել են երեխաների շարժողական, հաղորդակցական, սոցիալական և ինքնասպասարկման հմտությունների զարգացմանը, ինչպես նաև նրանց ակտիվ մասնակցությանը կրթական և համայնքային կյանքին:
Ծրագրի կարևոր բաղադրիչներից է եղել ծնողների, հատկապես մայրերի, աջակցությունն ու խորհրդատվությունը: Ծնողները ստացել են մասնագիտական ուղղորդում և հոգեբանական աջակցություն՝ երեխայի վերականգնողական գործընթացին առավել վստահ և արդյունավետ մասնակցելու համար:
Համայնքային մակարդակում իրականացվել են իրազեկման միջոցառումներ, ներառական հանդիպումներ և ամառային ճամբարներ, որտեղ հաշմանդամություն ունեցող և չունեցող երեխաները միասին խաղացել, սովորել և ձևավորել են ընկերական հարաբերություններ: Այս միջոցառումները նպաստել են ներառման գաղափարի տարածմանը, կարծրատիպերի նվազեցմանը և համայնքներում ավելի դրական վերաբերմունքի ձևավորմանը:
Կամրջելով հույսը, ներառումը, սովորելն ու զարգացումը՝ ծրագիրը նպաստել է այնպիսի համայնքների ձևավորմանը, որտեղ յուրաքանչյուր երեխա արժևորված է, ներառված և ունի իր ներուժը զարգացնելու և իրացնելու հավասար հնարավորություն:
2025 թվականին ծրագրի իրականացմանը աջակցել են՝
Mission East, IDBank և Idram («Մի դրամի ուժը» նախաձեռնություն), Buy Armenian Foundation, GlobalGiving, Hye Times, CMX Solutions Armenia և անհատ բարեգործներ:

ՆԵՐԱՌԱԿԱՆ ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿ ԻՋԵՎԱՆՈՒՄ

2025 թվականին «Հույսի կամուրջ» ՀԿ-ն իրականացրել է «Ներառական խաղահրապարակ» ծրագիրը Տավուշի մարզի Իջևան քաղաքի Երեխայի զարգացման և սոցիալական ներառման կենտրոնում: Ծրագրի շրջանակում ստեղծվել է անվտանգ, մատչելի և ներառական բացօթյա տարածք, որտեղ երեխաները՝ անկախ իրենց կարողություններից, հնարավորություն են ստացել միասին խաղալ, շփվել, սովորել և զարգանալ:
Նոր խաղահրապարակում տեղադրվել են սայլակով մուտք գործելու ճոճանակ, ադապտիվ մագլցման կառույցներ և ներառական կարուսել, որոնք ապահովել են բոլոր երեխաների հավասար մասնակցությունը խաղին, շարժմանը և սոցիալական փոխգործակցությանը: Ծրագրի արդյունքում ավելի քան 200 երեխա, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող, սոցիալապես խոցելի և տեղահանված երեխաներ, օգտվել են ներառական խաղային միջավայրից՝ զարգացնելով իրենց ինքնավստահությունը, շարժողական և սոցիալական հմտությունները: Խաղահրապարակը դարձել է երեխաների համար ոչ միայն խաղի, այլ նաև ընկերության, հաղորդակցության և համայնքում հավասար ու ընդունված զգալու կարևոր տարածք:

ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ ԵՒ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԶՈՐԱՑՈՒՄ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՈՒՄ

2025 թվականին «Հույսի կամուրջ» ՀԿ-ն իրականացրել է «Վերականգնողական ծառայությունների բարելավում Տավուշի մարզում՝ ենթակառուցվածքների զարգացմամբ և կարողությունների հզորացմամբ» ծրագիրը: Ծրագրի շրջանակում նախաձեռնվել է Իջևանում վերականգնողական ուսուցման կենտրոնի ստեղծումը՝ նպատակ ունենալով բարձրացնել վերականգնողական ծառայությունների որակն ու հասանելիությունը Տավուշի մարզում: Ծրագրի ընթացքում ընդլայնվել են կենտրոնի հնարավորությունները, իրականացվել են վերանորոգման և կահավորման աշխատանքներ, ստեղծվել է ժամանակակից ուսուցման և թերապիայի տարածք՝ երեխաների և մասնագետների համար առավել մատչելի և արդյունավետ պայմաններ ապահովելու նպատակով:
«Վիգմոր» կլինիկայի և Կոշի վերականգնողական կենտրոնի հետ համագործակցությամբ կազմակերպվել են բազմամասնագիտական այցեր, փորձի փոխանակումներ և վերապատրաստումներ Տավուշի մարզի բժիշկների, թերապևտների և ծնողների մասնակցությամբ: Մասնակիցները զարգացրել են երեխաների վերականգնողական աջակցության, թերապևտիկ մոտեցումների և ընտանիքահեն աջակցության վերաբերյալ իրենց մասնագիտական կարողությունները:
Ծրագիրն իրականացվել է Գերմանիայի Դաշնային Հանրապետության դեսպանության աջակցությամբ և նպաստել է, որպեսզի Տավուշի մարզի երեխաներն ու նրանց ընտանիքները ստանան առավել որակյալ, շարունակական և համայնքներին մոտ վերականգնողական ծառայություններ:

Botschaft
der Bundesrepublik Deutschland
Eriwan





«ՖՈՒՏԲՈԼ ԲՈԼՈՐԻ ՀԱՄԱՐ» ԾՐԱԳԻՐ

Ծրագիրը նպատակաուղղված էր հաշմանդամություն ունեցող և առանց հաշմանդամության երեխաների համատեղ մասնակցության, հավասար հնարավորությունների և սոցիալական ներառման խթանմանը սպորտի միջոցով: Ֆուտբոլը դարձավ ոչ միայն խաղ, այլև համագործակցության, ընկերության, փոխադարձ հարգանքի և յուրաքանչյուր երեխայի արժևորման հարթակ:

Ծրագրի հիմնական արդյունքները

2025 թվականին ծրագիրն իրականացվել է Տավուշի մարզի 64 համայնքներում և 82 դպրոցներում՝ ընդգրկելով հարյուրավոր երեխաների, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող, տեղահանված և սոցիալապես խոցելի ընտանիքների երեխաների:

- Շարունակել են գործել 16 ներառական դպրոցական ֆուտբոլային թիմեր:
- Ներառական ֆուտբոլային մարզումներին և խաղերին մասնակցել է 480 երեխա:
- Կազմակերպվել են 4 տարածաշրջանային և 1 մարզային ներառական ֆուտբոլային մրցաշարեր, որոնց մասնակցել է շուրջ 240 երեխա:
- Ամառային ամիսներին կազմակերպվել են 4 ներառական սպորտային ճամբարներ, որոնք միավորել են 240 երեխաների Տավուշի մարզի 58 համայնքներից:
- Վերապատրաստվել է 250 ֆիզկուլտուրայի ուսուցիչ և մասնագետ, ովքեր զարգացրել են ներառական սպորտի և անվտանգ, երեխայակենտրոն մարզումների կազմակերպման հմտությունները:

Ծրագրի շրջանակում դպրոցներն ու համայնքային կենտրոնները ստացել են սպորտային պարագաներ, համազգեստ և մարզական սարքավորումներ, որոնք նպաստել են երեխաների ակտիվ մասնակցությանը, թիմային համագործակցությանը և ներառական սպորտային միջավայրի ձևավորմանը:

Ծրագրի ընթացքում բազմաթիվ երեխաներ առաջին անգամ հնարավորություն ունեցան զգալու թիմի անդամ լինելու ուրախությունը, հաղթահարելու մեկուսացումն ու ձևավորելու նոր ընկերական կապեր:

ՓՈԽԱԿԵՐՊԵԼ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀԱՆՈՒՆ ԿԱՆԱՉ ԿԱՅՈՒՆ ԱՊԱԳԱՅԻ

«Կանաչ և կայուն ապագայի համար բարձրագույն կրթության վերափոխում» (T-GREEN) ծրագիրը նպատակ ունի աջակցել Հայաստանի Կանաչ գործարքին և Կայուն զարգացման նպատակներին՝ անցնելով ավանդականից դեպի ապագայամետ, կանաչ և միջոլորտային ուսումնական ծրագրերի: Ծրագիրը խթանում է ուսանողների շարժունությունը և համատեղ կրթական ծրագրերը: Կարևոր է կարողությունների զարգացումը՝ կրթական ծրագրերում այս սկզբունքները ներառելու և մասնագիտությունների ազգային ցանկը վերանայելու համար: Նոր Erasmus+ KA1 համակարգի ստեղծումը անհրաժեշտ է ուսանողների շարժունությունն ապահովելու համար: Այս նախաձեռնությունների միջոցով ծրագիրը նպաստում է Հայաստանի համար ավելի կայուն և ներառական ապագայի ձևավորմանը:

Ծրագրի կոնսորցիումի անդամներն են՝ Հայաստանի ազգային ճարտարագիտական համալսարան (ՀԱՃՀ), Եվրասիա միջազգային համալսարան (ԵՄՀ), Երևանի պետական համալսարան (ԵՊՀ), Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան (ՀԱՊՀ), Հայաստանի ազգային ագրարային համալսարան (ՀԱԱՀ), Գավառի պետական համալսարան (ԳՊՀ), Գորիսի պետական համալսարան (ԳորՊՀ), Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան (ՀՊՏՀ), Հայաստանի ֆրանսիական համալսարան (ՀՖՀ), Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն (ՈԱԱԿ), ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն (ԿԳՄՍՆ), Erasmus ուսանողական ցանց Երևան (ESN), «Հույսի Կամուրջ» ՀԿ, Պորտուգալիայի կաթոլիկ համալսարան (UCP), Յագելոնյան համալսարան (JU), Միկոլաս Ռոմերիս համալսարան (MRU), Միջազգային Հունական համալսարան (IHU):

Ծրագիրը համաֆինանսավորվում է Եվրոպական Միության կողմից:

Co-funded by the European Union

2025Թ.ՄՈՒՏՔԵՐ ԵՒ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ



ՀՈՒՅՍԻ
ԿԱՄՈՒՐՋ

2025

0009, ՀՀ, Երևան, Կորյուն 19ա

www.bridgeofhope.am

+374 10 560143